ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ ապրիլի 12 **N** 157-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, 3.1 մասով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի ղեկավար Անդրանիկ Պապիկյանի լիազորությունները կասեցնելու վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության 2022 թվականի մարտի 29-ի որոշումը, ինչպես նաև այն հաստատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ապրիլի 1-ի որոշումը և Արագածավան համայնքի Արտենի բնակավայրի բնակիչ Արթուր Հովսեփի Հովսեփյանի 2022 թվականի ապրիլի 12-ի դիմումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Արթուր Հովսեփի Հովսեփյանին՝ մինչև հետևանքների վերացումը կամ համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.04.2022 14:58:05 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3300890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ